Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2015 թվականի սեպտեմբերի 18-ի N 846-Ա
որոշմամբ ստեղծված հանձնաժողովի
2025 թվականի դեկտեմբերի 9-ի նիստի 01-25 արձանագրության

Գործունեության կանոնակարգ
Ազատ տնտեսական գոտու կարգավիճակ չունեցող արդյունաբերական գոտու ստեղծման նպատակով ներկայացված հայտերն ուսումնասիրող և գնահատող՝ մշտապես գործող միջգերատեսչական հանձնաժողովի

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանձնաժողովի նպատակն է ազատ տնտեսական գոտու կարգավիճակ չունեցող արդյունաբերական գոտու ստեղծման համար ներկայացված հայտերի ուսումնասիրումն ու գնահատումը:

2. Հանձնաժողովը իր գործունեությունն իրականացնում է՝ ղեկավարվելով «Արդյունաբերական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-184-Ն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 10-ի «Ազատ տնտեսական գոտու կարգավիճակ չունեցող արդյունաբերական գոտու ստեղծման հայտը ներկայացնելու և հաստատելու և ազատ տնտեսական գոտու կարգավիճակ չունեցող արդյունաբերական գոտու կազմակերպման կարգերը սահմանելու մասին» N 618-Ն որոշմամբ (այսուհետ՝ Կառավարության որոշում), Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 18-ի N 846-Ա որոշմամբ (այսուհետ՝ Վարչապետի որոշում) և ոլորտին առնչվող այլ իրավական ակտերով:

3. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է համապատասխան իրավական ակտի (ակտեր) ընդունմամբ:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Հանձնաժողովը՝

1) հաստատում է հանձնաժողովի կանոնակարգը, դրանում փոփոխությունները և լրացումները.

2) հաստատում է ազատ տնտեսական գոտու կարգավիճակ չունեցող արդյունաբերական գոտի ստեղծելու նպատակով ներկայացված հայտերի (այսուհետ՝ հայտ)՝ Կառավարության որոշմամբ սահմանված չափանիշների համաձայն գնահատման թերթիկների ձևերը.

3) հրապարակում է հանձնաժողովի գործունեության և հայտերի գնահատման հետ կապված տեղեկատվությունը՝ տեղադրելով այն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված կարգի համաձայն՝ ուսումնասիրում և գնահատում է ներկայացված հայտը.

5) ընդունում է հանձնաժողովի լիազորությունների շրջանակում անհրաժեշտ որոշումներ:

5. Հանձնաժողովի նախագահը՝

1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալն է, ով հանդես է գալիս հանձնաժողովի անունից.

2) հրավիրում և նախագահում է հանձնաժողովի նիստերը.

3) հանձնաժողովի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու համար, անհրաժեշտության դեպքում, իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի անդամների առաջարկությամբ հրավիրում է Հայաստանի Հանրապետության նախարարությունների, գերատեսչությունների, մարզպետարանների, ձեռնարկությունների, գիտահետազոտական հիմնարկների, բանկերի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին և համապատասխան փորձագետների.

4) ստորագրում է հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները:

6. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության քաղաքականության վարչության պետն է.

2) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները և նիստերը.

3) ապահովում է հայտի՝ հանձնաժողովի անդամներին էլեկտրոնային եղանակով տրամադրումը, հավաքագրում է հանձնաժողովի անդամների գնահատականները,

վերջիններիս հիման վրա կազմում է հայտի վերաբերյալ համապատասխան եզրակացություն և ներկայացնում այն լիազոր մարմին.

4) գնահատման թափանցիկության, պետության և շահագրգիռ կողմերի միջև երկխոսության և հետադարձ կապի ապահովման նպատակով հանձնաժողովի նիստերին մասնակցելու համար, ըստ անհրաժեշտության, հրավիրում է հայտատուներին և շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներին.

5) հանձնաժողովի նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ հանձնաժողովի անդամներին է ներկայացնում նախատեսվող նիստի օրակարգը.

6) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները և ներկայացնում հանձնաժողովի նախագահին և անդամներին՝ ստորագրության:

7. Հանձնաժողովի անդամները՝

1) պետական կառավարման մարմինների և շահագրգիռ կազմակերպությունների համապատասխան ներկայացուցիչներն են.

2) իրականացնում են հանձնաժողովի բոլոր լիազորությունները, բացառությամբ այն լիազորությունների, որոնք վերապահված են հանձնաժողովի նախագահին կամ հանձնաժողովի քարտուղարին:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

8. Հանձնաժողովի կառուցվածքը՝

1) Հանձաժողովը կազմված է Վարչապետի որոշմամբ հաստատված կազմից՝ նախագահից, քարտուղարից, արդարադատության, ֆինանսների, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, էներգետիկայի, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների, տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի ոլորտներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող պետական կառավարման մարմինների, քաղաքաշինության, հարկային, մաքսային բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա մարմինների ներկայացուցիչներից:

2) Հանձնաժողովի կազմում կարող են ներառվել նաև Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության, Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատի, ինչպես նաև այլ ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

10. Հանձնաժողովի նիստ գումարվում է հետևյալ դեպքերում՝

1) հանձնաժողովի նախագահի աշխատակարգային որոշմամբ, եթե գնահատման արդյունքում հայտը չի բավարարել անցողիկ շեմը (անցողիկ շեմ է համարվում հայտով ներկայացված գործարար ծրագրի գնահատման 51 և ավելի միավորը).

2) եթե հայտը չի գնահատվել հանձնաժողովի անդամների առնվազն 1/3-ի կողմից.

3) հանձնաժողովի անդամի կողմից հանձնաժողովի նախագահին ներկայացվել է հիմնավորում դրա լրացուցիչ քննարկման անհրաժեշտության վերաբերյալ:

11. Հանձնաժողովի նիստերի հրավիրման օրվա, վայրի և ժամանակի մասին հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին էլեկտրոնային եղանակով ծանուցում է նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ:

12. Հանձնաժողովի նիստն իրավազոր է հանձնաժողովի անդամների 2/3-ի մասնակցության դեպքում, իսկ հանձնաժողովի անդամների 2/3-ից պակաս լինելու դեպքում նիստը համարվում է չկայացած, և նշանակվում է նոր նիստ:

13. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են տվյալ նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: Հավասար ձայների դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

14. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է, հանձնաժողովի նախագահի որոշմամբ, հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:

15. Հանձնաժողովի յուրաքանչյուր նիստի համար կազմվում է արձանագրություն: Արձանագրությունները ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած մյուս անդամների կողմից:

16. Փաստաթղթաշրջանառությունը, այդ թվում՝ արձանագրության հաստատումը, իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

17. Հանձնաժողովի նիստի համապատասխան արձանագրության հիման վրա կազմվում է համապատասխան եզրակացություն և արձանագրության հետ ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը: